

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԸ 1918 Թ. ԹՈՒՐԹԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Ք. Խ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

*ԳԴԴ պատմության ամբիոնի լաբորանտ, ասիստենտ,
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հայցորդ*

1917 թ.՝ ռուսական երկու հեղափոխություններից հետո, Թուրքիան, օգտվելով Ռուսաստանում ստեղծված քաղաքական անկայուն իրավիճակից, մուսաֆաթական կուսակցության աջակցությամբ սկսեց Անդրկովկասում ծավալել համաթյուրքականության քարոզչություն և միջամտել նրա ներքին գործերին:

1918 թ. ապրիլի 9-ին թուրքիայի և մուսաֆաթականների ճնշման ներքո Անդրկովկասյան Սեյմի արտակարգ նիստը հայտարարեց Ռուսաստանից Անդրկովկասը անջատելու և երկրամասի անկախության մասին: Դրանից հետո Թուրքիան կատարեց հաջորդ քայլը: Բաթումի բանակցությունների օրերին, երբ Թուրքիայի և Անդրկովկասյան իշխանությունների պատվիրակությունները քննարկում էին երկրամասի ժողովուրդների համար ստեղծվելիք վարչակարգի հարցը, թուրքական սպառնալիքների ներքո Սեյմը հայտարարեց ինքնավարության մասին: Անդրկովկասում ստեղծվեցին երեք անկախ պետություններ:

1918 թ. մայիսի 26-ին անկախ հռչակվեց մենշևիկյան Վրաստանը, մայիսի 27-ին՝ մուսաֆաթական «Արևելակովկասյան մուսուլմանական հանրապետությունը», որին հենց այդ ժամանակ թուրքերի կողմից տրվում է Իրանի հյուսիսային նահանգի «Ադրբեջան» անվանումը, իսկ «նոր ազգին»՝ «ադրբեջանցիներ»:¹ Մայիսի 28-ին իր անկախությունը հռչակեց Հայաստանը:

Բաթումի դաշնագրով Թուրքիան ճանաչեց Հայաստանի անկախությունը, ըստ որի Արևելյան Հայաստանից Թուրքիային էր անցնելու 28 հազար քառ. կմ տարածք, որի մեջ էին մտնում Կարսը, Արդահանը, Կադզվանի և Օլթիի շրջանները, Երևանի նահանգից՝ Սուրմալի գավառը, Ալեքսանդրապոլ քաղաքը և Ալեքսանդրապոլի ու Էջմիածին գավառների երեք քառորդը, Երևանի գավառի կեսը, Շարուր-Ղարալագյազի գավառի մեկ հինգերորդը:² Հայաստանին մնալու էր Նոր Բայազետի գավառը, Երևանի, Էջմիածնի, Ալեքսանդ-

¹ Տե՛ս, **Հարությունյան Յ. Մ.**, Լեոնային Ղարաբաղը 1918-1921 թթ., Երևան, 1996, էջ 29:

² Տե՛ս, Նույն տեղում, էջ 30:

րապոլի և Ղարաքիլիսայի գավառների առանձին մասերը: Այդ պայմանագիրը, ինչպես նշել է Լեոն. «Հայաստանին տալիս էր մի տարածություն, որը հազիվ բավական լիներ հայ ժողովրդի գերեզման դառնալուն: Դա... մի լեռնոտ, մեծագույն մասով անպտուղ երկիր է Սևանի լճի արևմտյան, հարավ-արևելյան կողմերում»:³

Բաթումի խորհրդաժողովում թուրքական պատվիրակությունը, բացի վերը նշված տարածքներից, պահանջեց նաև ամբողջ Գանձակի նահանգը՝ Ղարաբաղի հետ միասին և Նախիջևանի գավառը:⁴

Բանակցությունների ընթացքում Ալեքսանդր Խատիսյանի գլխավորած պատվիրակությունը համաձայնություն է տալիս թուրքերին, որ Ղարաբաղը պատկանի Ադրբեջանին, իսկ Ջանգեզուրը՝ Հայաստանին: Սակայն ադրբեջանցիները, դրանով չբավարարվելով, շարունակեցին պահանջել նաև Ջանգեզուրը:⁵

Բաթումի բանակցություններում թուրքերի ագրեսիվ դիրքորոշումը Հայաստանի հանդեպ պայմանավորված էր այն արգելքով, որ Հայաստանը, մասնավորապես Ղարաբաղը, ուներ պանթուրքիզմի ծրագրերի իրականացման ճանապարհին: Դա առանց թաքցնելու, բացեիբաց արտահայտում էին երիտթուրքական պարագլուխները Բաթումի խորհրդաժողովի ընթացքում:

Երիտթուրքերի պարագլուխներից մեկը՝ Հայկական ցեղասպանության կազմակերպիչ Բեհաեդդին Շաքիր բեյը Բաթումի բանակցությունների ժամանակ Ա. Խատիսյանին հայտնել էր իր բացասական վերաբերմունքը հայերի նկատմամբ՝ ասելով. «Հայերը կանգնած են մեր համախալամական և համաթրքական սրբազան իտեալներու իրականացման ճամբուն վրայ, և մենք անխուսափելիորեն կը բաղխինք անոնց հետ: Ատիկա վեր է և դուրս է մեր անձնական զգացումներէն ու տրամադրութիւններէն: Մենք հարկադրուած ենք տարերայնօրէն ոչնչացնել մեր ճամբուն վրայեն այն ամէնը, ինչ որ արգելք կը հանդիսնայ մեր ազգային սրբազան իտեալներուն: Եվ յետոյ, դուք միշտ Ռուսերուն հետ էք: Դուք անոնց առաջապահն էք, իսկ Ռուսերը մեր ռիսերին թշնամիներն են: Պատմական թշնամիները: Մտածեք այս մասին, փոխեցեք ձեր հոգեբանութիւնը և օրիէնտացիան: Դուք թշնամի էք և ես ալ թշնամի եմ, բայց մենք ընկերակիցներ ենք. Մենք կը հասկնանք կենդանի մարմնի կեանքը, և անոր մէջ չկայ մարդասիրութիւն կամ կամքի տկարութիւն: Զօրավոր և կենսունակ մարմնի իրավունքն է, այն միակ իրավունքը, որով կապրի մարմինը: Այդ-

³ Տե՛ս, Լեո, Թուրքահայ յեղափոխական գաղափարաբանությունը, հ. Բ, Փարիզ, 1935, էջ 201:

⁴ Տե՛ս, «Մշակ», հունիսի 2, 1918թ.:

⁵ Տե՛ս, Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 425:

պես է և ազգերու կեանքի մէջ: Այդտեղ չկայ մեղկ զգայնականութիւն, կայ միայն ինքնապաշտպանութեան բնագոյ և զգացում»:⁶

Հայ ժողովրդի ցեղասպանութեան մէկ ուրիշ երիտթուրքական հանցագործ՝ Վեհիբ փաշան, նույն Բաթումի խորհրդաժողովում, դիմելով հայկական պատվիրակությանը, անամոթաբար ասել է. «Դուք կը տեսնէք որ ճակատագիրը կը քաշէ Թուրքիան արեւմուտքէն արեւելք. Մենք հեռացանք Պալքաննէրէն, կը հեռանանք նաեւ Ափրիկաէն, բայց մենք պէտք է տարածուինք դէպի արեւելք. Հոն է մեր արիւնը, մեր կրօնքը ու լեզուն: Եւ ասիկա տարերային ձգողութիւն ունի. Մեր եղբայրները Պաքու, Տաղստան, Թուրքիստան եւ Ատրպեջան են: Մենք պէտք է ճամբայ ունենաք դէպի հոն: Եւ դուք՝ Հայերդ կանգնած էք մեր այդ ճամբուն վրայ: Պահանջելով Վանը՝ դուք կը փակէք մեր ճամբան դէպի Պարսկաստան: Պահանջելով Նախիջեւանը ու Ջանգեզուրը՝ դուք արգելք կը դառնաք մեզի իջնելու Քուրի հովիտը և երթալու Պաքու: Կարսն ու Ախալքալաքը կը փակեն մեր ճամբան դէպի Ղազախ ու Գանձակ: Դուք պէտք է մէկ կողմ քաշուիք և մեզի ճամբայ տաք: Ահա թէ ուր է մեր հիմնական վէճը: Մեզի պէտք են երկու լայն ճամբաներ, որոնք հնարավորութիւն տան մեր բանակներուն առաջ շարժելու եւ պաշտպանելու: Մէկ ճամբան՝ Կարս-Ախալքալաք-Բորչալու-Ղազախն է, որը կտանի դէպի Գանձակ, միւսը կերթայ, Շարուր-Նախիջեւան-Ջանգեզուրով Քուրի հովիտը: Դուք կարող էք մնալ անոնց մեջտեղը, այսինքն՝ Նոր-Պայազետի և Էջմիածնի շուրջը»:⁷

Պատճառն այն էր, որ Թուրքիան Ղարաբաղի և հայկական մյուս գավառների հարցերով հետաքրքրվում էր ոչ թե Ադրբեջանի, այլ Օսմանյան կայսրության ազդեցության ոլորտի ընդլայնման շահերից ելնելով: Թուրքիան փորձում էր իրականացնել համաթուրքականության ծրագրային փուլերը մեկը՝ «Օղուզական պետության» ստեղծումը, որը պետք է ընդգրկեր «Թուրքիան, Ադրբեջանը, Պարսկական Ադրբեջանը և Թուրքմենստանը»:⁸ «Օղուզական պետության» ստեղծման առաջին քայլը Սև ծովից մինչև Կասպից ծով (Բաթումից մինչև Բաքու) ընկած տարածքում Թուրքիայի խնամակալության ներքո «Մեծ Ադրբեջան» պետության ստեղծումն էր, որը պետք է միացներ Թուրքիան Կովկասի և Միջին Ասիայի թուրքախոս ժողովուրդների հետ:⁹ «Մեծ Ադրբեջան» պետությունը պետք է ընդգրկեր Գանձակ-Ելիզավետպոլի և Բաքվի նա-

⁶ Տե՛ս, **Խատիսյան Ա.**, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 77:

⁷ Տե՛ս, Նույն տեղում, էջ 86:

⁸ Տե՛ս, **Ստեփանյան Գ.**, Բաքու քաղաքի հայության պատմությունը, Երևան, 2011, էջ 364:

⁹ Տե՛ս, Նույն տեղում:

հանգանքները, Երևանի նահանգի հարավային մասը, Կարսի և Բաթումի նահանգներն ամբողջությամբ, Վրաստանից՝ Թիֆլիսի նահանգի հարավային մասը և Դաղստանի հարավային մասի որոշ հատվածները, ինչպես նաև Ատրպատականը, վերջինիս միավորման ճանապարհին կանգնած էր Յայաստանը իր Ղարաբաղ, Ջանգեզուր, Նախիջևան, Շարուր և այլ գավառներով, ուստի անհրաժեշտ էր նախևառաջ այդ գավառները միացնել՝ ապագայի լայն ծրագրերն իրականացնելու համար: Այսպիսով՝ Յայաստանից փորձ էր արվում զավթել Արցախն ու Ջանգեզուրը, Նախիջևանն ու Շարուրը, Երևանի և Էջմիածնի գավառները և Մասիսի ստորոտներով ամբողջ Սուրմալուն մինչև Կարսի նահանգը: Յայաստանից զավթվելու էր մոտ 50520 քառ. կմ տարածք:¹⁰

Վերոհիշյալ մեջբերումները անառարկելիորեն ապացուցում են երեք իրողությունը.

1. Թուրք զավթիչները, հենվելով Բաթումի պայմանագրի վրա, մտածում էին ճանապարհ բացել Ստամբուլից դեպի Բաքու՝ Նախիջևան-Ջանգեզուր-Արցախ գոտիով, ինչը նշանակում էր այդ տարածքների բռնազավթումը Յայաստանից:

2. Ամեն կերպ իրենց համար անվտանգ դարձնել Լեռնային Ղարաբաղը՝ դեպի Բաքու շարժվելու համար:¹¹

3. Թուրքերը, համաթրքականության գաղափարաբանությամբ պայմանավորված, իրենց պլանները կարող էին իրականացնել միայն Ադրբեջանին տիրելու դեպքում:

Ահա թե ինչու երիտթուրքերը զոհ չէին Յայաստանի՝ հսկայական տարածքների տեր դառնալուց և Բաթումի խորհրդաժողովում հրատապ խնդիր ունեն ճշտելու, թե իրենց զորքերն ինչպես պետք է շարժվեն դեպի Բաքու, որպեսզի տիրանան Անդրկովկասին:¹²

Այսպիսով Օսմանյան Թուրքիան ու նոր կազմավորված Ադրբեջանը պետք է միավորվեին՝ դառնալով թուրքական մեծ պետություն Բալկաններից մինչև Միջին Ասիայի խորքերը ձգվող վիթխարի տարածքի վրա:¹³ Մինչդեռ Լեռնային Ղարաբաղը խոչընդոտում էր Թուրքիայի ծրագրերի իրականացմանը և արգելք էր դեպի Բաքու տանող ճանապարհին, ինչպես նաև խանգարում էր Զուլֆայի գծով և Գանձակից Եվլախ շարժվող թուրքական ուժերի միավոր-

¹⁰ Տես, Ռուբեն, Յայ յեղափոխականի մը յիշատակները, հ. է, Թեհրան, 1982, էջ 183-187:

¹¹ Տես, Աբրահամյան Զ., Արցախի հերոսամարտը (1918), Երևան, 1998, էջ 6:

¹² Տես, Շահումյան Ա., ԵԼԺ, հ. 5, էջ 17-18:

¹³ Տես, Խատիսյան Ա., Յայաստանի Յանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 86:

մանը: Լեռնային Ղարաբաղը զինակալելը Թուրքիայի համար մի սովորական հարց չէր, այլ համաթուրքական ծրագրի հերթական գերխնդիրը:

Թուրքիայի կողմից Ադրբեջանի անկախության հռչակումից հետո, Լեռնային Ղարաբաղին և Ջանգեզուրին տիրանալու մուսաֆաթականների ցանկությունը պետական քաղաքականության աստիճանի հասցվեց: Բանն այն էր, որ եթե մինչ այդ Լեռնային Ղարաբաղի և Ջանգեզուրի հանդեպ ադրբեջանցիների ոտնձգությունները քողարկված ու անկազմակերպ էին, ապա Թուրքիայի բացահայտ հովանավորությունից հետո այն դարձավ ավելի բացահայտ ու ագրեսիվ, որը պայմանավորված էր երկու հանգամանքով.

1. Ադրբեջանն արդեն ուներ կայացած բանակ, որը նրան թույլ էր տալիս դիմելու ավելի կտրուկ և ագրեսիվ քայլերի:

2. Թուրքիայի հարձակումը Չայաստանի վրա վերջինիս ուշադրությունը շեղում էր Բաքվի ճանապարհից:¹⁴

Անդրկովկասյան Սեյմի լուծարվելուց հետո Չայաստանի և Ադրբեջանի հանրապետությունների միջև առաջացած տարածքային վեճերը հիմնականում կապված էին Լեռնային Ղարաբաղի և Ջանգեզուրի հետ: Մուսաֆաթականները, լավ հասկանալով կոնֆլիկտի էությունը, հարցը փորձում էին լուծել իրենց ձևով՝ վիճելի տարածքները բռնակցելով, սակայն Ղարաբաղի հայության կողմից մերժողական պատասխան ստանալուց հետո որոշեցին դեմել «մեծ եղբորը»՝ Թուրքիային, ուստի հայտարարեցին, որ տարածքային հարցերը պետք է լուծի Կոստանդնուպոլսի կոնֆերանսը, որը կայանալու էր 1918թ. հուլիսին: Չայաստանի Չանրապետության պատվիրակությունը Ավետիս Ահարոնյանի գլխավորությամբ մեկնեց Կոստանդնուպոլիս՝ կոնֆերանսին մասնակցելու համար, սակայն հանգամանքները այնպես դասավորվեցին, որ կոնֆերանսը չկայացավ, և հայկական պատվիրակությունը չորս ամիս սպասելուց հետո վերադարձավ:¹⁵

Հայկական պատվիրակությունը Ղարաբաղի հարցով բազում հանդիպումներ ունեցավ Թուրքիայի ղեկավար գործիչների հետ և հասկացավ, որ Թուրքիան ամեն ինչ անելու է, որ հարցը լուծվի հոգուտ Ադրբեջանի: Ահա, թե ինչ է գրում այդ մասին Ա. Խատիսյանը. «Թուրքերը շատ լավ ծանօթ էին մեր ծրագիրներուն և ձգտումներուն, բայց չէին ուզեր որ գոյութիւն ունենայ կենսունակ Չայաստան մը: Անոնք դեմ էին, որ Ղարաբաղն ու Ջանգեզուրը կցուին Չայաստանին, որովհետև կուզէին բաց պահել իրենց ճամբան դէպի Պաքու:

¹⁴ Տե՛ս, **Հարությունյան Դ.**, մշվ. աշխ., էջ 34:

¹⁵ Տե՛ս, «Մշակ», 7 հունիսի, 1918թ.:

Դեմ էին նոյնպես, որ Ախալքալաքն ու Լոռին մեզի տրուին, որովհետև կուզէին ազատ պահել ճամբան դէպի Ղազախ ու Գանձակ...»:¹⁶

Կոստանդնուպոլսում գտնվելու ժամանակ հայկական պատվիրակությունը փորձեց թուրք պետական և քաղաքական գործիչների հետ քննության առնել երկու երկրների միջև սահմանների հստակեցման հարցը: Ակնհայտ դարձավ, որ թուրքական կողմին հետաքրքրում են այլ հարցեր: Թուրքերը անհաջողություններ կրելով արևմտյան ճակատում՝ փորձում էին շարժվել դեպի արևելք: Կորցնելով Բալկանները՝ թուրքերը հույս ունեին, թե իբրև փոխհատուցում պետք է ստանան կենդանի ուժ և հող Կովկասի, Թուրքմենստանի և պարսկական Ատրպատականի մեջ:¹⁷

Հայկական պատվիրակությունը հանդիպումներ ունեցավ նաև թուրք ընդդիմադիր ներկայացուցիչներից մեկի՝ Հուսեյն Ջահիդ բեյի հետ, որը՝ որպես հանրային գործիչ, փորձում էր օգտակար լինել հայերին և հանդիպումներից մեկի ժամանակ ասաց. «Պետք է դուք ծեղ հաշիվ տաք և ըմբռնեք նաեւ մեր ազգային կենսական պահանջները: Մեզ պետք են կենդանի ուժեր, և հայերը պետք չէ որ մեր ճամբան փակեն դէպի մեր եղբայրները»՝ ընթացքում քարտեզի վրա ցույց տալով երկու ճանապարհներ, որոնք տանում էին դեպի այդ եղբայրները. առաջին՝ Ջանգեզուր-Ղարաբաղ ճամբան, և երկրորդ՝ Ախալքալաք-Բորչալու գիծը: «Ասոնցմէ մէկն ու մէկը պետք է բաց մնայ մեզ համար...»:¹⁸

Մինչ հայ պատվիրակները գտնվում էին Կոստանդնուպոլսում թուրքական բանակը գրավեց Բաքուն՝ սարսափելի կոտորած կազմակերպելով և սպանելով մոտ 30 000 հայ, սկսեց սպառնալ նաև Լեռնային Ղարաբաղին: Հայ պատվիրակների բոլոր ջանքերը, որպեսզի կասեցվի թուրքերի առաջխաղացումը Ղարաբաղ, ոչ մի արդյունք չտվեցին:¹⁹

Մուսաֆաթական պարագլուխները, գործելով Թուրքիայի թելադրանքով, սկսեցին դիմել ուժի գործադրման և ահաբեկման քաղաքականությանը:

Թուրքական 3-րդ և 4-րդ զորախմբերի՝ 1918թ. մայիսին Սարդարապատի, Բաշ Ապարանի մարտերում ունեցած անհաջողություններից և Ղարաբաղի սայի գրավումից հետո երկրորդ զորախումբը Ջաջուռ-Համամլու-Ղարաբաղի սա-Ռիլիջան-Ղազախ-Ելիզավետպոլ գծով շարժվեց դեպի Բաքու: Դեպի Բաքու շարժվող մուսուլմանական բանակից առանձնացավ մի զորախումբ և

¹⁶ Տե՛ս, **Խատիսյան Ա.**, նշվ. աշխ., էջ 99:

¹⁷ Տե՛ս, Նույն տեղում, էջ 103:

¹⁸ Տե՛ս, Նույն տեղում, էջ 104:

¹⁹ Տե՛ս, Նույն տեղում, էջ 108-111:

Կովկասյան 2-րդ դիվիզիայի հրամանատարներից մեկի՝ Ջեմիլ Ջահիդ բեյի գլխավորությամբ գնաց դեպի Ղարաբաղ ու բանակատեղի դարձրեց Աղդամը՝ Լեռնային Ղարաբաղի սահմանային դարպասներից մեկը, որը բանալի էր գավառ ներխուժելու համար:²⁰

Թուրքական բանակի հրամանատարը հեռուն տանող նպատակներ ուներ: Նա ծրագրել էր արյան մեջ խեղդել արցախահայության գոյապայքարը, նվաճել երկրամասը, որը անառիկ բերդի նման փակում էր Ջուղայի գծով և Գանձակից Եվլախ շարժվող թուրքական զորամասերի միավորման ճանապարհը: Ահա թե ինչու թուրքերը առաջինը հաշվեհարդար տեսան Գանձակի հայության հետ, որպեսզի վերջինս լիովին զրկվի պայքարելու հնարավորությունից:²¹ Սակայն ելնելով Բաքվի իրադարձություններից՝ թուրքերը չէին կարող մեծաքանակ ուժեր կենտրոնացնել Լեռնային Ղարաբաղի դեմ, թեև թուրքերը շատ անհանգիստ էին՝ թիկունքում զգալով Ղարաբաղի շնչառությունը:

Թուրքերի դեպի Ղարաբաղ և Ջանգեզուր հարձակման նախօրյակին Ադրբեջանը տնտեսական շրջափակման ենթարկեց Ղարաբաղը:

Թուրքական բանակի հրամանատարությունը և Ադրբեջանի կառավարությունը, Ղարաբաղը կտրելով արտաքին աշխարհի հետ կապող ուղիներից, հույս ուներ դրանով անվտանգ դարձնել այն, քանի դեռ Բաքվի հարցը լուծված չէր:²²

Լեռնային Ղարաբաղը նվաճելու ծրագրի իրականացումը դրվեց թուրքական Կովկասյան 2-րդ դիվիզիայի հրամանատար Ջեմիլ Ջահիդ բեյի վրա: Թուրք հրամանատարը ծրագրել էր սրընթաց գրոհով վերցնել Շուշին՝ Արցախ աշխարհի սիրտը:²³

Թուրքական հրամանատարության կողմից երկու վերջնագիր ներկայացվեց Լեռնային Ղարաբաղի իշխանություններին, սակայն դեռ պատասխան չստացած՝ թուրքական հրամանատարությունը սկսեց իր հարձակումը: Թուրք-թաթարական զինված կազմավորումները 1918 թ. սեպտեմբերի 22-23-ին լայնածավալ հարձակում սկսեցին Ղարաբաղի դեմ և մեկը մյուսի հետևից գրավեցին Ասկերանի աջ և ձախ կողմերի Միրշալու, Դահրազ, Վարազաբուն, Փրջամուլ, Նախիջևանիկ, Քյաթուկ, Խրամորթ, Խանաբաղ, Դիլջբաղ, Քարագլուխ գյուղերը:²⁴ Այդ գյուղերի գրավումով անպաշտպան էր մնում Շուշի տա-

²⁰ Տե՛ս, *Հարությունյան Հ.*, նշվ. աշխ., էջ 34:

²¹ Տե՛ս, Նույն տեղում, էջ 41:

²² Տե՛ս, «Ժողովրդի ծայն», 10 սեպտեմբերի, 1918:

²³ Տե՛ս, *Հարությունյան Հ.*, նշվ. աշխ., էջ 48

²⁴ Տե՛ս «Մշակ», 22 փետրվարի 1919.:

նող ճանապարհը: 1918թ. սեպտեմբերի 24-ին Շուշին առանց պայքարի անձնատուր եղավ: Այսպիսով՝ թուրք-թաթարական համատեղ ուժերով Ադրբեջանի իշխանությունը տարածվեց Շուշիի վրա: Շուշիի գրավումով ադրբեջանցիները ցանկանում էին քաղաքն օգտագործել որպես պատվար ամբողջ Լեռնային Ղարաբաղը գրավելու համար:

Թեև Շուշին ընկավ առանց դիմադրության, սակայն թուրք հրոսակներին այդպես էլ չհաջողվեց ընկճել Արցախն ու Զանգեզուրը: Արցախցիները մինչև վերջ անմռուչ տարան իրենց կռիվը թե՛ թուրքական, և թե՛ մուսաֆաթական Ադրբեջանի հրոսակների դեմ: Թուրքիային այդպես էլ չհաջողվեց օղակել նորանկախ Հայաստանի Հանրապետությունը և իրագործել արևելահայությանն իսպառ բնաջնջելու համաթուրքական ծրագիրը: Արցախյան ազատամարտը պսակվեց հայ ժողովրդի այնքան թանկ գնով ձեռք բերված հաղթանակով:

***Բանալի բառեր** – Օղուզական պետություն, Լեռնային Ղարաբաղ, քաղաքականություն, պայմանագիր, Բաթում, ադրբեջանցիներ*

NAGORNO-KARABAKH IN 1918 TURKEY'S FOREIGN POLICY

Q. KH. HAYRAPETYAN

*Laboratory Assistant of GSU Chair of History, Assistant,
Researcher of the History Institute of the NAS*

The main purpose of this article is to show the role and significance of Mountainous Karabakh in Turkish foreign policy in 1918. The question is: what role did it play in the process of implementation of ideas of Pan-Turkism and Pan-Islamism?

Turkey was interested in Karabakh not for Azerbaijan but for expanding the sphere of influence of Ottoman Empire. Turkey was trying to implement one of the Pan-Turkism project phases _ creating an “Oghuzic State” which should include “Turkey, Azerbaijan, Iranian Azerbaijan and Turkmenistan”. The first step towards creating an “Oghuzic State” was, in the custody of Turkey, to create a “Great Azerbaijan” in the territory between Batumi and Baku which would link Turkey with the Turkish speaking peoples in Caucasus and Central Asia. Karabakh unwittingly became a hindrance to the advancement of Turkish troops to Baku. However, The Turkish project failed and Artsakh liberation struggle was crowned with victory.

НАГОРНЫЙ КАРАБАХ В СФЕРЕ ВНЕШНЕЙ ПОЛИТИКЕ ТУРЦИИ В 1918 ГОДУ

К. Х. АЙРАПЕТЯН

*Лаборант кафедры истории ГГУ,
соискатель института НАН РА*

Основная цель статьи - показать роль и значение Нагорного Карабаха в сфере внешней политики Турции в 1918 году и какую роль она сыграла она на пути всеобщей тюркизации и всеобщей исламизации. Турция Карабахским вопросом интересовалась не для Азербайджана, а для расширения сферы влияния Османской империи.

Турция пыталась осуществить один из раундов программы тюркизации - создание Окузского государства, которое должно было включить в себя Турцию, персидский Азербайджан и Туркменистан. Первые шаги к созданию Окузского государства предполагали создание на территории от Батуми до Баку государства „Великий Азербайджан" под попечительством Турции, которое должно было соединить Турцию с Кавказом и с тюркоязычными народами Средней Азии. Карабах невольно стал помехой для продвижения турецких войск к Баку. Но турецкий проект не осуществился, и Арцахское сражение увенчалось победой.